ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԵԹԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ (ԿԱՄԱՎՈՐ)
ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

ԵՐԵՎԱՆ2024

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված են ‹‹Տարրական մանկավարժություն և մեթոդիկա›› մասնագիտության ուսուցչի (դասվարի) «Մաթեմատիկա», «Ռուսաց լեզու», «Ես և շրջակա աշխարհը» առարկաներից կամավոր ատեստավորման քննության հարցաթերթիկի կառուցվածքը, պատասխանների ձևաթղթի լրացման կարգը, գնահատման չափանիշները, առաջադրանքներում ընդգրկվող բովանդակային նյութը, առաջարկվող գրականության ցանկը:

Ուսուցիչների կամավոր ատեստավորման քննության հարցաթերթիկի կազմման համար հիմք են հանդիսացել հանրակրթական դպրոցի 1-4-րդ դասարանների «Մաթեմատիկա», «Ռուսաց լեզու», «Ես և շրջակա աշխարհը» առարկաների չափորոշիչները, ծրագրերը, դասագրքերը, հանրակրթության պետական չափորոշիչների դրույթները, ինչպես նաև տարրական կրթության մանկավարժությանը, տարրական դասարաններում «Մաթեմատիկա», «Ռուսաց լեզու», «Ես և շրջակա աշխարհը» առարկաների ուսուցման մեթոդիկային առնչվող հիմնարար գաղափարները:

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հարցաթերթիկը պարունակում է 35 առաջադրանք, որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 65 միավոր (100%), որոնցից՝

«Մաթեմատիկա»-30 միավոր
«Ռուսաց լեզու»-30 միավոր
«Ես և շրջակա աշխարհը»-5 միավոր

Մաթեմատիկա

Կառուցվածքային առումով առաջադրանքներն ունեն երկու հիմնական տեսակներ:

1. **Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**, որոնցից յուրաքանչյուրի համար տրվում է պատասխանի 4-ական տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում: Ընտրովի պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանին համապատասխանող վանդակում հարկավոր է դնել X նշանը: Տվյալ այունակում մեկից ավելի նշում կատարելու դեպքում առաջադրանքը գնահատվում է զրո:

2. **Կարճ պատասխանով առաջադրանքներ**, որոնք 2 տեսակի են:

   - Տրվում է խնդիր, որը պետք է լուծել և ստացված թիվը գրել ձևաթղթում՝ առանց չափման միավորի: Ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ

միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում

- Տրվում են մի քանի պնդումներ, որոնցից տարբեր առաջադրանքներում ճիշտ կարող են լինել որևէ 2-ը կամ 3-ը. պատասխանին համապատասխանող թվերը պետք է գրել ձևաթղթի համապատասխան վանդակներում: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվում է մեկական միավոր: Այս առաջադրանքներից հնարավոր է վաստակել համապատասխանաբար՝ 1 կամ 2, և 1, 2 կամ 3 միավոր:

Բովանդակային առումով հարցաթերթիկում առկա են հանրակրթական դպրոցի 1-4-րդ դասարանների «Մաթեմատիկա» առարկայի բոլոր բաժինները, ինչպես նաև մաթեմատիկայի տարրական ուսուցման մեթոդիկայի դասընթացի հետևյալ բաժինները.

- թվաբանություն,
- մեծություններ,
- երկրաչափության տարրեր,
- հանրահաշվի տարրեր,
- տրամաբանության և ինֆորմատիկայի տարրեր:

Ռուսաց լեզու

Կառուցվածքային առումով առաջադրանքները ունեն երկու հիմնական տեսակներ:

1. **Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**, որոնցից յուրաքանչյուրի համար տրվում է պատասխանի 4-ական տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում: Ընտրովի պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանին համապատասխանող վանդակում հարկավոր է դնել X նշանը: Տվյալ սյունակում մեկից ավելի նշում կատարելու դեպքում առաջադրանքը գնահատվում է զրո:

2. **Կարճ պատասխանով առաջադրանքներ**, որոնց դեպքում տրվում են մի քանի պնդումներ, որոնցից տարբեր առաջադրանքներում ճիշտ կարող են լինել որևէ 2-ը կամ 3-ը. պատասխանին համապատասխանող թվերը պետք է գրել ձևաթղթի համապատասխան վանդակներում: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվում է մեկական միավոր: Այս առաջադրանքներից հնարավոր է վաստակել համապատասխանաբար՝ 1 կամ 2, և 1, 2 կամ 3 միավոր:

Բովանդակային առումով հարցաթերթիկում առկա են առաջադրանքներ

տարրական ուսուցման մեթոդիկայի դասընթացի 4 հիմնական բաժիններից՝ գրաճանաչության մեթոդիկա, բացատրական ընթերցանության մեթոդիկա, քերականության մեթոդիկա, խոսքի զարգացման մեթոդիկա, և լեզվաբանությունից՝ հնչյունաբանություն, բառագիտություն, քերականություն, որոնց բովանդակությունը համապատասխանում է 1-4-րդ դասարանների «Ռուսաց լեզու» առարկայի ծրագրային պահանջներին:

Ես և շրջակա աշխարհը

Կառուցվածքային առումով բոլոր առաջադրանքները **ընտրովի պատասխանով** են, որոնցից յուրաքանչյուրի համար տրվում է պատասխանի 4-ական տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում: Ընտրովի պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանին համապատասխանող վանդակում հարկավոր է դնել X նշանը: Տվյալ այունակում մեկից ավելի նշում կատարելու դեպքում առաջադրանքը գնահատվում է զրո:

Բովանդակային առումով հարցաթերթիկում առկա են հանրակրթական դպրոցի 2-4-րդ դասարանների «Ես և շրջակա աշխարհը» առարկայի բոլոր բաժինները: